



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՓԱՍՏՏԻՆԱՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

### **Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՐԵՑ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ Ի ՊԱՏԻ ԻՐԵՆ ՏՐՈՒԱԾ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

- ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՇՆՈՐՀԵՑ ՆՈՒԻՐԵԱԼ  
ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ
- Ի ՆՊԱՍ ՏՐՈՒՄԵՆՆԻՆ՝ ՇՈՒՐՋ 350 ՀԱՁԱՐ ՏՈՒՄԻ  
ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախագահությամբ եւ ներկայությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Դպրեվանքի Սանուց Միութեան կողմէ ի պատիւ Վեհափառ Հայրապետին կազմակերպուած ճաշկերոյթը տեղի ունեցաւ Ուրբաթ, 7 Յոկտեմբեր 2011ի երեկոյեան ժամը 9ին, Փասատիւնայի Հայ Կեդրոնին մէջ, հիւրընկալությամբ Տեր եւ Տիկ. Սարգիս եւ Նունէ Սեփեճեանի:

Ամերիկեան քայլերգի եւ հայկական օրհներգի երգեցողությամբ, Վեհափառ Հայրապետը իր շքախումբով եւ հոգեւորականաց դասու ընկերակցութեամբ, մուտք գործեց սրահ: Ներկայ էին Արեւմտեան եւ Արեւելեան թեմերու Առաջնորդները, Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Բարձր. Տ. Օշական Արք. Չոլոյեան, Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, Գերշ. Տ. Կորիւն Արք. Պապեան, Գաւազանակիր Հոգշ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան, միաբան վարդապետներ, Կիլիկեան Ս. Աթոռի Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տեառք Խաժակ Տիքիճեան, Վահէ Եագուպեան, Տոքթ. Տրդատ Մանկիկեան, Թեմիս Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներ, Կաթողիկոսարանի եւ Թեմի բարերարներ, Թեմիս ծխական շրջաններու հոգաբարձական կազմի ներկայացուցիչներ, երեսփոխաններ, դպրաց դասերու, սարկաւազաց եւ տիկնանց միութիւններու ներկայացուցիչներ, երիտասարդաց եւ Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմեր, քոյր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ վեց հարիւրէ աւելի ներկաներ:

Յօտնկայս երգուեցան «Որք զարդարեցին» շարականը եւ Դպրեվանքի «Սիրտ ի սիրտ» քայլերգը: Վեհափառին կողմէ ճաշի սեղաններու օրհնութենէն ետք, բացման պատշաճ խօսքով հանդէս եկաւ Ս.

Աստուածածին եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան, որ Դպրեվանքի Սանուց Միութեան եւ ներկաներու անունով, բարի գալուստ մաղթեց Նորին Ս. Օծութեան: Ան վեր առաւ սրբոց թարգմանչաց օրուան խորհուրդը եւ այդ ոգիով ու Դպրեվանքի շունչով դրժուած ու մեծցած դպրեվանեցիները, որոնք որպէս սան, անցան Դպրեվանքի մարդակերտումի եւ հայակերտումի հնոցէն ու եկեղեցական թէ աշխարհական՝ նետուեցան եկեղեցւոյ, հայ կեանքի գանազան բնագաւառներուն մէջ. այսօր հպարտութեամբ եւ յուզումով կը յիշենք դպրեվանքեան օրերը: Այլ խօսքով, մենք այսօր բոլորս, մեր հաւատարմութեան եւ ծառայութեան ուխտը, Յայ Եկեղեցւոյ ու մեր սիրելի Դպրեվանքին հանդէպ կը վերանորոգենք մեր ուխտը եւ կը խոստանանք քալել մեր ազգին ու եկեղեցւոյ նուիրեալ հարազատ գաւակներու ուղիով:

Գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր, որուն ընթացքին հանդէս եկան հայ երգի, մշակոյթի ու Կիլիկեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանացած երգիչներ՝ աշուղական երգերու մեկնաբան Լեւոն Գաթրճեան, ժողովրդական երգերու մեկնաբար Ատիս Յարմանտեան եւ Յարութ Փամպուլքեան:

Վեհափառ Յայրապետը անակնկալ մը վերապահած էր հայ երգի սպասարկուներէն Յարութ Փամպուլքեանին, որ Լիբանանէն սկսած էր կատարել իր առաջին համերգները, եւ մինչեւ օրս, ազգային, հայրենասիրական եւ խանդավառ երգերով կը խանդավառէ երիտասարդութիւնը. մեր մշակոյթի գանձանակին անոր դրած քառասուն տարիներու վաստակը Վեհափառ Յայրապետին կողմէ գնահատուեցաւ եւ պարգեւատրուեցաւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Յայտագրի ընթացքին, պաստառի վրայ ցուցադրուեցաւ Դպրեվանքի սաներուն ամենօրեայ կեանքէն առնուած պատառիկներ, ինչպէս նաեւ Դպրեվանքի տեսուչ՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմեճեանին խօսքը, Դպրեվանքի հոգեկրթիչ, սերունդներ դաստիարակող, կազմաւորող դերին եւ ծառայանուէր առաքելութեան մասին: Ապա, Ազգ. Առաջնորդարանի երիտասարդաց խումբերէ կազմուած »Լուսաւորիչ« երգչախումբը, ղեկավարութեամբ Յոգշ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, հանդէս եկաւ ժողովրդային եւ հոգեւոր երգերով:

Յանդիսութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազանը, Կաթողիկոսարանին, Դպրեվանքին, Ազգ. Առաջնորդարանին ու Ազգ. վարժարաններուն եղած նուիրատուներու անունները եւ անոնց կատարած նուէրներու գումարները յայտարարելէ ետք, հրաւիրեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու յատկապէս Դպրեվանքի դերին եւ առաքելութեան հաւատացող, Դպրեվանքէն ներս երկար տարիներ սան պահող, այժմ հանգուցեալ Կիրակոս Թիթիգեանի այրին՝ Մարթա Թիթիգեանը, վեհափառ Յայրապետէն ստանալու «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը:

Անակնկալներու շարքը վերջ չէր գտած. յուզիչ պահ մը ստեղծուեցաւ, երբ Վեհափառ Յայրապետը, ծափողջոյններու ներքեւ, Կիլիկեան «Ասպետ»ի շքանշանով պարգեւատրեց Դպրեվանքի սաներէն՝ Տիար Սարգիս Սեփեճեանը: Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նունէ Սեփեճեաններ, երկար տարիներ, լուռ եւ առանց գովասանք կամ փառք ակնկալելու, Աստուծոյ տուած պարգեւները երախտապարտ սրտով ազգին ու եկեղեցւոյ

Նուիրաբերած են: Վեհափառ Հայրապետի Արեւմտեան մեր Թեմին այժմու Հովուապետական օրհնաբեր այցելութեան առիթով, որ կը գուգադիպի Դպրեվանքի 81անմեակին, Դպրեվանքի Սանուց Միութեան ի պատիւ Վեհափառ Հայրապետին նուիրուած ճաշկերոյթին հիւրընկալութիւնը ստանձնելէ անկախ՝ Տէր եւ Տիկ. Մեփեճեան ամուլը Անթիլիասի Դպրեվանքին նուիրեց 81 հազար տոլար: Ուրախալի ու հպարտառիթ էր, որ խանդավառ երեկոյթին, հին եւ նոր բարերարներու կողմէ Դպրեվանքին կատարուած սրտաբուխ նուիրատուութիւններու գումարը հասաւ շուրջ 350 հազար տոլարի:

Երեկոյթին փակման իր պատգամը փոխանցեց Վեհափառ Հայրապետը: «Այս երեկոյ, խորհրդաւոր այս մթնոլորտին, ըսաւ Վեհափառը, հոգեւոր եւ ազգային արժէքներով լիցքաւորուեցանք: Այսօր մեր մտածումներուն առանցքը Դպրեվանքը եղաւ: Դպրեվանքը իր հաւատքով, տեսիլքով, առաքելութեամբ եւ ծառայութեամբ, որպէս ոգի ամէն տեղ է, ներկայ ու պատրաստ է ծառայելու մեր ժողովուրդի հոգեւոր, ազգային եւ մշակութային ծով կարիքներուն: Դպրեվանքը մարդակերտումի եւ հայակերտումի սրբազան օճախ է: Անոր հնոցին մէջ մենք դրօնուեցանք, պատանի մեր մտքերը հարստացան, սիրտն ու հոգին ներթափանցուեցան հայոց պատմութեան անցեալի հերոսապատում, փառաւոր էջերով: Հրաշակերպուեցանք աւետարանական սկզբունքներով, այլափոխուեցանք աստուածային ճշմարտութիւններու ուսուցումներով եւ Հայ Եկեղեցւոյ մտքի, հոգիի ու հաւատքի հսկաները, նոր եւ իմաստաւոր կեանք տուին մեզի: Դպրեվանքէն առինք ինչ որ չկայ ուրիշ տեղ: Անոր հարազատ ակունքներէն հաւատքով ու ազգային արժէքներով հարստացանք ու տարինք մեր ժողովուրդի զաւակներուն: Չգեստը, սքեմը չեն որ մարդս կ'արժեւորեն, այլ նախանձախնդիր ոգին, տեսիլքը, կոչումը, նուիրումը, տալու եւ ծառայելու անպայմանական պատրաստակամութիւնը:

«Երբ կը նայիք մեր միաբանութեան, կը տեսնէք Դպրեվանքին կոչումը՝ ծառայութեան տէր նուիրեալներ հաւատքի, սիրոյ եւ զոհողութեան բարձր գիտակցութեամբ զսպանակուած՝ եկեղեցւոյ ու ժողովուրդի ծառայութեան եւ առաքելութեան յանձնառու ընտրեալներ: Նիւթապէս սատար հանդիսանալով ու տալով Դպրեվանքին՝ կը յիշեցնէք, որ Դպրեվանքէն աւելիով սպասումներ ունիք: Եկեղեցական մշակը քիչ է այն ծով կարիքներուն դիմաց, որ ազգը մեզմէ կ'ակնկալէ: Ծառայողներու, յանձնառու նուիրեալներու պէտքը ունինք: Մենք կը խոնարհինք Դպրեվանքի խորհուրդին, անցեալի ու ներկայի անձնուրաց բոլոր նուիրեալներու վաստակին դիմաց: Կ'աղօթենք, որ Աստուած նոր մշակներ գործի բերէ, պատրաստէ ու առաքէ եկեղեցւոյ եւ ազգի ծառայութեան ծարաւի ու խոպան հոգեւոր անդաստանները:

«Խօսքը կը թռչի, գործը կը մնայ: Անթիլիասը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ անոր բաբախող սիրտը հանդիսացող մեր սիրելի Դպրեվանքը գո՛րծ է, հաւա՛տք է, տեսի՛լք է, նուիրո՛ւմ ու հոգեւոր առաքելութեան ճանապարհ է, եկէ՛ք մասնակից, ուղեկից եւ ճանապարհորդակից եղէք Անթիլիասի հաւատքի առաքելութեան», եզրափակեց Նորին Ս. Օծութիւնը:

«Ի վեհ բարձանց» հայրապետական մաղթերգով, «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» երգով վերջ գտաւ պատմական այս երեկոյթը: Ներկաներ իրենց սրտին սեղմած «կրօնի հուրն ու ազգին սերը», բաժնուեցան սրահէն, վերանորոգելով ու վերահաստատելով հաւատարմութեան իրենց ուխտը Կիլիկեան պատմական Ս. Աթոռին եւ Կաթողիկոսութեան սիրտը հանդիսացող Դպրեվանքին ու անոր հոգի՝ Յայր. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

## **CATHOLICOSATE SEMINARY BANQUET IN HONOR OF HIS HOLINESS CATHOLICOS ARAM I**

- HIS HOLINESS BESTOWS MEDALS UPON FAITHFUL SERVANTS  
- \$350,000 IN DONATIONS TO THE SEMINARY

On the evening of Friday, October 7, 2011, a banquet in honor of His Holiness Catholicos Aram I and dedicated to the Catholicosate Seminary was held at the Pasadena Armenian Center. The banquet was organized by the Seminary Alumni Committee and hosted by Mr. and Mrs. Sarkis and Nouné Sepetjian.

With the singing of the American and Armenian national anthems, His Holiness entered the hall where he was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, H.E. Archbishop Yeprem Tabakian, H.E. Archbishop Gorun Babian, staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian, Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Central Executive members Mr. Khajag Dikijian and Dr. Dertad Manguikian, Religious and Executive Councils, members and representatives of Prelacy parishes and sister organizations, and over six hundred guests.

Guests remained standing for the singing of the "Vork Zartaretsin" hymn and the Seminary anthem, after which His Holiness blessed the tables.

The evening's Master of Ceremonies, Rev. Fr. Vazken Atmajian, welcomed His Holiness on behalf of the organizing committee and guests, and stated that "today we renew our allegiance and service to the Armenian Church and our Seminary and we promise to continue our path of service to our Church, nation, and people".

The cultural program was comprised of performances by "St. Mesrob Mashdots" medal recipient singer Levon Katerjian, and singers Adiss Harmandian and Harout Pamboukjian.

His Holiness surprised Mr. Harout Pamboukjian by awarding him a "St. Mesrob Mashdots" medal in honor of his forty year long career which began in Lebanon.

A slideshow chronicling Seminary life and the message of Seminary Dean H.E. Archbishop Nareg Amezian was then shown to the guests. A

performance by the Prelacy "Lousavorich" youth choir led by Very Rev. Fr. Barthev Gulumian followed.

More surprises followed as Martha Titizian, widow of Giragos Titizian, who was a long time devotee of the Seminary, was invited to the stage where His Holiness awarded her the "St. Mesrob Mashdots" medal.

Amid great applause from the guests, Mr. and Mrs. Sarkis and Nouné Sepetjian were invited up to receive the "Knight of Cilicia" medal from His Holiness for their years-long support and generosity. Alongside sponsoring the banquet, the Sepetjians donated \$81,000 on the occasion of the 81<sup>st</sup> anniversary of the Seminary. With this donation, a total of \$350,000 was collected throughout the evening to be allocated to the Seminary.

His Holiness was then invited to deliver his message. His Holiness stated that the Seminary, with its mission, vision, and service, is an omnipresent spirit, and is ready to serve the manifold spiritual, religious, and cultural needs of our people. The Seminary is the foremost institution in building character and national identity, the place where young minds are enriched and hearts and souls are nourished, where young adults are transformed by the teachings and principles of the Bible and the spirit of our Church forefathers. What we learned and received at the Seminary we then took to the people, said His Holiness. When we look at our Brotherhood, we see in them the calling and mission of the Seminary, faith, love, and service. The needs of our people are great, and require more servants and supporters. We pay our respects to the mission of the Seminary and to all past and present devotees, praying for Almighty God to bless us with new servants to quench the spiritual thirst of our people, said His Holiness, and concluded by stressing that "the Catholicosate and the Seminary is faith, it is a vision, it is devotion, it is a mission of faith. Let us stand behind that faith mission".

The evening came to a close with the benediction by His Holiness and the singing of the Pontifical and Cilician anthems.